Մ. Տ. ՇԻՈՏ.

ՍԵՒ ՀԱՐՍԱՆԻՔ

(Պատկեր տաճկահայոց իրական կեանքէն)

A I 138294

Երանցն են մեր ամէն բռնաց արդիւնքը.
Երանցն են մեր կայս ազգիկներ. հարուածքը...

(Գամառ-Գաթի թղթ.)





РУСЧУКЪ
Печатница Е. Н. Мандженовъ
1904.

ՍԵՐ ՀԱՐՍԱՆԻՔ

(Պատկեր Տաճկահայոց իրական կեանքեն)

Երանցն են մեր ճակատ քրտանց արդիւնքը.
Երանցն են մեր կոյս աղջիկներ, հարսունքը...

(Գանան-Քարիպա)

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Ութ տարիներ են անցել այն օրէն, երբ տեղի ունեցաւ իմ այստեղ պատմելիք դէպքը. այո՛, 8 տարիներ. բայց կը հաւատացնեմ ձեզ, որ և ոչ մի օր նա, այդ դէպքը, վրիպած չէ իմ յիշողութենէն. Եւ մինթէ կարո՞ղ էի ես մոռանալ այդ դէպքը, երբ դրա հետ կապուած է իմ անմոռաց Սիրելիներս յաւէտ խնկելի յիշատակը!

Սիրելիներ՞ս, որոնց Ուրականները գիշեր ցորեկ կը սաւառնին հէք պանդխտաց աչքին առաջ, ու անընդհատ շշնջալով ականջիս մօտ՝ 4 տառերէ կազմուող մի բառ սրբազան, կը դրդեն ինձ բաւարարութիւն տալ — այսպէս թէ այնպէս — այդ բառով արտայայտուող արդարացի՛, անյետաձգելի՛ պահանջին!

Ընթերցողն իզուր չը սպասէ՝ լսելու ինձմէն այդ Բառը. ես նրան կը տանիմ այն միջավայրը, ուր կատարել է Սեր հարսանիքը. և ընթերցողն ինքը կ՚եզրակացնէ, թէ ի՞նչ կըշռնչան Սերելինների թափառական հոգիները!

Ահա նա։ —

Ա.

Իմ ծննդավայր Ն. գաւառաքաղաքը այն ահռելի դժոխք դարձած դրախտումն է, որին դուք կանուանէք Ռուսկա-Հայաստան։

Այդտեղ, Ն.ի կենտրոնական թաղերէն միանումն էր մեր սեպհական երեքյարկանի գեղեցիկ տունը, ուր կը բնակուէինք մենք—հայրս, մայրս, մենք 8 եղբայրներ և մեր մի փոքրիկ քոյրը։ Տասնամեկ հոգուց բաղկացած մեր ընտանիքը մէկն էր այն քաղաքաւոր ընտանիքներէն, որոնք հնարաւորութիւն ունէին «իրենց իւղով տապակելու» և որոնց գրանը դեռ չէր համարձակուեր մօտենալ Պանդխտութիւնը—Ռուսկահայի տունը քանդող այդ սարսափելի հրէշը։ Պէտք է խոստովանիլ, որ Թիւրքիայում այդպիսի բաղդաւոր հայ-ընտանիքներ շատ հազուադէպ էին։

Ուրբաթէ-ուրբաթ, երբ Ղարիներին շաբաթ-շաբաթն կարաւանը — բեռնաւորուած Թամբակոսի ընտիր կաշիներով ու Ցիգրանակերտի և Փարբերդի անուանի սէկերով ու մէշինների—կանգ

կ՝առնէր մեր ամբարի դրանը՝ մէկ շաբաթէն դատարկելու և կրկին լեցնելու պայմանաւ, — այդ ատեն մեր Հայրենակից անպաշար թուրքերի աչքը դուրս կելնար։

— Օ՜, կեաւո՜ւր, կեաւո՜ւր, կը շշնջային նոքա՝ գլուխները թափ տալով և ակռաները կրճտացնելով, — քիչ կը մնայ՝ դատարի փաթիշահը դառնաս...

Դու այլևս բան գործ չունիս՝ արի հասկացուր այդ պարոններին, որ ոչ ոք արդելք չի լինիր, եթէ իրենք էլ զբաղուին այդ գործով և նոյնպէս դատարի փաթիշահները դառնան...

Ա՞յ էր մեղաւոր, երբ իրենց անշնորհքութեան պատճառով փորձերը անյաջող դուրս եկան, որով նրանք շահելու փոխարէն ունեցածներն էլ փճացրին և տեղի տուին «կեաւուրա հօրս։

Կարծես Այլահն էլ է թարուել, որ անհաւատի գործին յաջողութիւն կը չնորհէ, իսկ հաւատացեալներէն երես կը դարձնէ...

Էշի պոչը կ՝երկարէր, բայց միւսլիմանների վաճառականական ձեռնարկները մապաշափ չէին յառաջադիմեր. և այդ հանգամանքը չափազանց կ՝անհանգստացնէր մեր Հայրենակիցներին...

Բ.

Միայն վաճառականական ասպարիզում ձեռք բերած փայլուն գիրքը չէր, որ կը զբր-

զէր մեր մուսլիման հայրենակիցների նախանձը հօրս դէմ, այլ և... Ծ բաբահիգիր որդուց տէր լինելը. և այդ՝ շատ պարզ, հասկանալի է։

«Խալիֆի երկրում՝ լաւ տունն էլ, լաւ ագարակն էլ, գեղեցիկ կինն էլ, առողջ ու շնորհալի որդին էլ . . . — այդ ամենը միայն ուղղափառներին կը վայելեն . . . Կեանքը պէտք է մնայ գժուարութեամբ քարշ տայ իւր թերմաշ, անպէտք գոյութիւնը՝ զուրկ աշխարհային բոլոր բարիքներէն, որպէսզի մնայ Մարգարէի հոգին չի խռովիւ։

Այդ էր, ահա, մեր հայրենակիցների հաւատոյ հանգանակը, և այդ իսկ պատճառով նոքա կատարութեանէն ինքզինքին կ'ուտէին, երբ հայրս՝ իւր Ծ որդիքներով շրջապատուած՝ կ'երթար ամարանոց—այգին կամ՝ այլ տեղ։

— Ա՜յ մուսլիման լինելիք բաբահիգիներ, կատէին թուրքերը մեզ տեսնելիս, — ոչոնք, սակայն, իրենց հոգին սատանայի փայ են շինել! . . .

Գ.

Հայրս կը գուշակէր, որ վերոյիշեալ 2 հանգամանքները շատ սուղի պիտի նստէին մեզ վրայ։ Այո՛, նա համոզուած էր, որ թուրքերը վերջ իվերջոյ մի խաղ պիտի խաղան մեր խաղաղ ընտանիքի գլխին։ Բայց ի՞նչ կարող էր

անել խեղճը։ Ա՛չ բնութեան դէմ կարելի էր որոնչալ՝ իւր առատաձեռնութեան համար, ո՛չ հարստութիւնը կարելի էր տանել, գնաը լեցնել և ոչ էլ իւր զուակացը բնական զարգացման դէմ կարելի էր չինական պարիսպ քաշել, որպէսզի գրացիների քէֆը տեղը գար։

Հաւանական վատանգէն խոյս տալու միակ փրկարար միջոցը՝ զօրեղ, կազմակերպուած ինքնապաշտպանութեան գիմելն էր։ Եւ՝ չ'նայած որ Հայրս «Հրամարիմ քէնա» ու «նկեցէէնա գուրս ոչինչ չէր ցանկար տեսնել մի ժամանակ՝ այժմ, թուրքերի այդ ամբ–աշկարա թշնամական գիրքը նկատելէն յետոյ, — մի օր կանչեց մեզ իւր մօտ և ասաց.

— Սիրելի որդիք, այս անիծուած երկրում Հայի ճակատին գրուած չէ գլուխն ապահով բարձի դնել, մանաւանդ մեզ նման շատ թէ քիչ գիրքի տէր Հայի։ . . . Դուք շատ անգամ էք խօսել ինձ մօտ «ասիայի ասստուածիմաստին», սակայն իմ՝ չափազանց լաւատեսութիւնը ուրիշ առակ կը պատմէր ինձ! Ժամանակը ինքը յեղաշրջեց իմ համոզումների հիմքը և ինձ էլ գարձրեց բոլորովին համակարծիք ձեզ։ Դրա շնորհիւ այսօր ես էլ ստիպուած եմ կրկնելու, որ մեր միակ յոյսը, մեր միակ փրկիչը լինել կարող է միայն ասիայի աստուածը!

— Օ՜ն, տրնմե, աւելացրեց նա լրջօրէն,

— կառուցէք մեզ մեծ արժանաւոր տաճար այդ աստուծոյ համար և թող նա փրկէ մեզ պալիք փորձանքներէն . . . Հաւատացած կացէք, որ այսօրուանէ սկսեալ ես պիտի լինիմ ամենաջերմ երկրպագու այդ տաճարին և աշխարհս ոչինչ այլևս չէ կարող խախտել իմ հաւատքը! Զան տղերք, ես վաղուց պէտք էր լսած ու հետևած լինէի ձեր ամենակարուկ, ամենախելացի խորհուրդներին, — ճանչնալ ասիայի աստուծոյ ամենակարող իշխանութիւնը և ծունր դնել նրա առաջ, — բայց այժմ միայն բացուեցան իմ աչքերը։ Հոգ չէ՛. լաւ է ուշ, քան երբէք...

Եւ եղբայրներս, որպէս անսահման ուրախութեամբ, կատարեցին հօրս ցանկութիւնը։ Այդ օրէն դեռ մի ամիս չ'անցած՝ հոյակապ «տաճարը» մի սրբազան մասը դարձաւ մեր կացարանի . . .

Գ.

Հօրս նախկին կարծիքով լաւ հայ լինելու համար բաւական էր՝ օրը երկու անգամ ժամ գնալ, տարէնը գոնէ 5 անգամ պատարագ անել տալ, մառաց մօրթելի, ապքանների ոտքը միլ, պաս ու ծոմ պահել, անպայման հայերէն խօսիլ և մարդկանց իրաւունքը չ'կարել։ Ուրիշ ոչինչ։

Սակայն «Տաճարը» կատուցելէն յետոյ եղաշրջեցաւ և՛ նրա նեղբին աշխարհը։ Այժմ

արդէն դէմ չէր նա իւր՝ XX դարի շեմքում ապրող հայ երիտասարդ զաւակաց մի քանի պահանջներին, որոնցով նոքա կուզէին հաւասարմութեամբ ծառայել ժամանակի ոգուն...

Այդ միջոցներին մեր կողմերում երևան եկաւ մի 8-ամեայ փառաւոր Օրգան, որը աբձագանքն էր հարստահարած տաճկահայի դարաւոր, հոգեմաշ, անտանելի տնքոցին։ Այդ Օրգանի էջերում կը խօսէր ժամանակակից ինտելիգենցիան՝ ճեղքերով կործանարար համբերատարութեան ու «խոհեմութեան» արձանը և լոյս-աշխարհ հանելով անյոգդոգդ յառաջխաղացութեան ելքտրականացնող կոչը, որը միակ ապեղանին էր տաճկահայի պատմական վէրքերի!

Ափսո՜ս, սակայն, որ այդ անեման, այդ փառահեղ «գաղէմեան» ոչ հաւասարաչափ պատշաճաւոր ընդունելութիւն կը գտնէր բոլոր մեր ցեղակիցների մօտ. կային որոշ «բաղդաւոր» դասակարգեր, որոնք՝ չ'գիմանալով նրա անողոք հարուածներին, չէին կամենայ ականջ դնել նրա աստուածային պատգամներին...

Միայն «համակրողների» մի սահմանափակ շրջան էր, որ բաւական փշոտ ճանապարհի վրայ ձեռք կը բերէր նրան, և այդ համակրողների շրջանին կը պատկանէին իմ եղբայրները։ Դրա համար էլ եղբայրներս յաճախ լսել էին «խոհեմ» հօրս բերանէն հայրական խրատներ և... մի քանի սպառնալիքներ նոյն իսկ,

եթէ փորձէին շարունակել իրենց գայրացնող ընթացքը։ Իսկ հիմա, մինչեւ յոհեմ մարդը, արդեւք չ'լինելէ գաս, ինքը կը յորդորէր եղբայրներիս, որ աշխատին ամեն կերպ՝ Օրգանի քարոզած Գաղափարները տարածել Հայ ժողովրդի գանգան խաւերում . . .

— Եթէ հեռաւոր երկիր նստած այդ Օրգանը կը պահանջէ ձեզմէն, կասէր հայրս, — որ ծախէք իմ ողջ գոյքը և նուիրէք Իրա պաշտպանութեանը՝ մի՛ խնայէք, որովհետև Նրա միջոցաւ կ'որոտայ ասիայի աստուածը իւր հոգեպարար պատգամները!

Գաղափարի յաղթանակը ակներև կը փայլէր հօրս դէմքին վրայ։

Նա կըզգար այժմ, որ իսկապէս բաղդաւորութեան մօտ է մեր գերդաստանը։

Ե.

Մի հանգամանք, սակայն, չափէ դուրս կ'անհանգստացնէր հօրս։ Ծ որդիքներէն և ոչ մին չէր ցանկար ամուսնանալ, որովհետև մեր կողմերում Հայ երիտասարդութիւնն առ հասարակ այն բոլորովին անհիմն կարծիքին էր, թէ երբ մի երիտասարդ կը վճռէ նուիրուել Օրգանի Գաղափարներին՝ նա չ'պէտք է ամուսնանայ։

— Գաղափարակոնն ամուսնանալով, կ'ասէին նրանք, — կը կորցնէ իւր անհատական

ազատութիւնը, կը ծանրաբեռնի կոշմնակի հոգ-
սերով և այլևս անկարող կը լինի կատարել իւր
սրբազան պարտականութիւնները! Ո՛չ, գաղա-
փարականը չ'պէտք է կապէ իւր ոտքերը. նա
կատարելապէս ազատ պիտի լինի, որպէսզի
երբ հարկը պահանջէ՝ դնա և անէ այն, ինչ
որ կը պահանջէ Օրդանը . . .

Եւ հազարաւոր երիտասարդներ այդպիսի
տրամաբանութեամբ խոյս կը տային ընտանե-
կան օճաղէ, ամուսնական կեանքէ։

Հայրս իզուր կը թքնէր համոզել եղբայր-
ներիս, թէ ամուսնացած մարդիկ նոյնպէս կա-
րող են լաւ գործիչներ լինել, որ եթէ ամուս-
նութիւնը մի որոշ չափով կը կաշկանդէ մար-
դոց ազատութիւնը, միւս կողմէն նա ունի և՛
իւր դրական կողմերը, որ չպէտք է մոռանալ։

— Դուք նկատել էք անշուշտ, կ'ասէր հայ-
րը, — որ մեր բոլոր յոյսերը, մեր բոլոր ա-
կնկալութիւնները կենտրոնացած են բացառա-
պէս երիտասարդութեան, նոր-սերնդի գործու-
նէութեան վրայ։ Որովհետև դա է հայ ժողովը-
դի ամենակենսունակ, ամենաարդասաբեր տար-
րը։ Այդպէս պիտի լինի և՛ ապագայում։ Իսկ
ովքե՞ր պիտի ծնունդ տան այդ ապագայ սերն-
դին, եթէ ոչ արդի երիտասարդութիւնը . . .
Այո՛, սիրելի որդիքս, մենք այսօր կանք, վա-
ղը չ'կանք, մինչդեռ մեր սիրած ու թողած
գործը շարունակողներ կը պահանջէ մեզմէն...

Մի՛ մոռացէք, որ ռկիսաերջանիկա ապագայումն էլ աշխատին գործեր ունենք մենք անելու՝ մեր հեռաւոր նպատակներն իրագործելու համար . . . Երկա՞ր չդիմայի առաջին օրակն է դեռ մեր ձեռքումը, մնացեալ օրակները իրենց թիւից էլ աւելի սերունդների պէտք ունին . . . Եւ վերջապէս պէտք է մոռանէք դուք, որ եթէ ձեր ծննդավայրում մարդիկ երանի կըտան ինձ այսօր, այդ ձեր շնորհիւ է. մի՞թէ չէիք ցանկայ, որ միևնոյն երանին ձեզ էլ տային մարդիկ . . .

— Խոստովանեցէք, երիտասարդներ, կը նկատէր յաճախ մայրս, — որ եթէ մեր հայրերն ու պապերը ձեզ նման մոռանային, այսօր գոյութիւն չէինք ունենայ ոչ մենք և ոչ էլ դուք, այսինքն ժամանակակից հրաշագործ սերունդը! Այդպէս կարելի չէ, սիրելիք, ցեղի բեղմնաւորութեան մասին մոռանալն էլ պարտականութիւն է... Եթէ կը սիրէք ձեր օճաղը՝ ամուսնացէք, միայն, իհարկէ, նախ քան այդ ջանալով, որ՝ ձեր կեանքի մէջ չ'ապրիք համար՝ արժանաւոր, յարմարագոյն կենակիցներ ընտրէք ձեզ համար . . .

Զ.

Մեղաց ուրախութիւնը չափ չ'կար, որովհետև ամենամեծ եղբայրս — Պետրոս — գիշել էր Ներանց թաղանձանքին։

Հարսնացուն պատրաստ էր։ Մեր քաղաքի օրիորդաց ուսումնարանի առաջնակարգ ընթացաւարտներէն մին, որ իւր ստացած նպաստակայարմար կրթութեան և գովելի առանձնայատկութիւններու շնորհիւ կարող էր խիստ ձեռնտու ամուսին լինել խստապահանջ եղբօրս։

Այլևս հասկանալի է, որ Ծ որդւոյմէն երբ մէկը միայն համաձայնել էր ամուսնանալ՝ հայրս ոչինչ խնայելու չէր, կարելի եղածին չափ շքեղ հարսանիք անելու համար։ Այդ պատճառով էլ հարսնախօսութեան նախնական ձեւականութիւնները վերջանալէ յետոյ, հաղիւ 1—2 շաբաթ անց, մեր բոլոր բարեկամներին ու ծանօթներին հայրս հրաւէր ուղարկեց՝ հոկտեմբերի 23-ին եղբօրս հարսանեաց ներկայ լինելու։ Հրաւիրուած էին նոյնպէս և դաւառապետ փաշան ու մի քանի Ֆիրվա քրդեր իրենց ընտանիքներով։

Հասաւ և այդ օրը։ Մեր երեքյարկանի տանն ասեղ ձգելիր՝ գետին չէր իյնար։ Եղբօրս հարսանիքը ամբողջ քաղաքի հարսանիքն էր, որովհետև քանի՞-քանի՞ խեղճ ծնողներ, ամիս-

ների ու տարիների ընթացքում, համոզել էին իրենց երիտասարդ որդոցը, որ ամուսնանան, հայրենի օճաղը չէնցնեն, բայց իզուր էր անցել ամեն աշխատանք . . . Այժմ, եղբօր ամուսնութեամբ, մարդիկ իրաւամբ կը յուսային վերացած տեսնել այդ սոլիկ երեւոյթը, և այդ իսկ պատճառով ասացի, որ եղբօր հարսանիքը ամբողջ քաղաքինն էր. շա՞տ ծնողների համար յաղթական, ոչն օր էր այդ օրը։ Եւ ուրախութեանէն կը հրճուէին մարդիկ!

Է.

Թէև մեր կողմերում ընդհանրապէս սովորութիւն է՝ պսակի խորհուրդը եկեղեցում կատարել, բայց գաւառապետ փաշան «բարեկամաբար» խորհուրդ էր տուել հօրս՝ եղբօրս պըսակը տանն անելու։

Դրա համար էլ լուսաբացին, մեր տան երկրորդ յարկի ընդարձակ դահլիճում, խուռն բազմութեան ներկայութեամբ, սկսեցաւ սբ. պսակի արարողութիւնը խիստ հանդիսաւոր եղանակով։

Թանգագի՞ն, անմոռա՞ց բոպէներ, որոնց յիշելով մի վայրկեան կը մոռանամ կեանքի

բոլոր, բոլոր դառնութիւնները . . . Աւա՜ղ, սակայն, որ՝ շա՜տ, շա՛տ վազանցուկ եղան այդ բոպէները և տեղի տին մահաշունչ տխրութեան . . .

Այս անիծեալ աշխարհում ե՞րբ և ո՛ր Հայի ուրախութիւնն է եղել յարատև, որ իմը պիտի լինէր . . . Եւ ինչո՞ւ, ա՜խ, այն միջոցին չ՚մոռաբերեցի ես, որ «Հայ» եմ և հետևաբար տեղիք չկար յոյս դնելու թէկուզ բոպէական երջանկութեան վրայ!

Ը.

Ահա թէ ինչո՛ւմն է բանը։

Հէնց այն միջոցին, երբ քահանաներն ու եկեղեցական երգեցիկ խումբը միաբերան սկսեցին երգել «Մ՚վ երանելի՝ ամենեցունց» շարականը՝ գրում, յանկարծ, որոտացին հազարաւոր հրացէններ և իրենց խլացուցիչ թընդիւններով ամբողջ քաղաքը դղրդեցուցին . . .

Մի ակնթարթում փոխուեցաւ հարսնևորների ուրախ տրամադրութիւնը և ամենքին տիրեց մեռելային սարսուռ . . .

Ո՞վ կարող էր երևակայել, որ հօրս թըշնամի թուրքերը կարող էին չար, դիւական նախանձէն կուրանալ և մի քանի հազար քրդերով ու թուրք խուժանով յարձակում գործել

այդ օրը մեր տան վրայ փառաւոր հանդէսք Ոսկի ՀԱՐՍԱՆԻՔԻ վերածելու համար...

Արշաւողները մօտ 4000 հոգի էին, ամենքը փառաւորապէս զարդարուած։ Նրանց կառաջնորդէր, ամենքի նժոյգի վրայ բազմած և ոտքէ-գլուխ զինուած, մեր կողմերում յայտնի հայասէր Ս. աղան, որ իւր գործած անթիւ գազանութիւնների համար փարձատրուած էր իմաստուն բարեխնամ Սուլթան-Ապտ-Իւլ-Համիտ կայսրէն ակնանակուս շքանշաններով։ Ս. աղան իւր արիւնարբու արշաւախմբին հրամայել էր՝ կառարել մեր տանը գանուող բոլոր կենաւարներին, մինչև օրորոցի վերջին երեխան և ցոյց տալ Ն. քաղաքի միւս հայերին, որ Ալի-Օսմանի երկրում քրիստոնեայ հայն իրաւունք չունի յաջող առնուր և... առոյգ զաւակներ ունենալու...

Պէտք է ասել, որ մենք էլ քչւոր չէինք. չ'հաշուելով կանայք և երեխաները՝ 120 հոգու չափ պէնք կրելու ընդունակ ոգեւորեալ կային մեր մէջ, որոնց կը միանային, իհարկէ, և՝ քիրվա քրդուհիները, մօտ 7 հոգի։ Եթէ դրա վրայ աւելացնենք և այն գեղեցիկ կարգադրութիւնը, որ արել էր հայրս, — ինքս էլ չ'գիտեմ ինչի գրգռմամբ, առաջուց ձեռքի տակէ հասկացնելով հրաւիրուածներին, որ զգոյշ պատները հեռները վերցնեն, — հասկանալի կը լինի, որ աւելորդ էին հայ կանանց ու ե-

բեխանների սարսափելի վայնասունը, լացն ու կոծը, ոչխարի նման կոտորելու երկիւղը...

Ուրեմն 4000 թշնամու դէմ մենք ունէինք մօտ 130 հոգի, մեծաւ մասամբ ատրճանակներով ու գաշոյններով զինուած, և մի փառաւոր գիրք։ Փառաւոր էր, այո, մեր գիրքը, որովհետև մեր առնն հասասաւած լինելով 4 փողոցների մէջտեղը և չինուած կարծրագոյն քարէ՝ թշնամին սոխպաւած էր փողոցներէն գընդակ տեղալ ամրակառոյց պատերի վրայ։

Առաջին քայլը, որ առաւ թշնամին՝ փողոցներում իւր գիրքը գրաւելէ յետոյ՝ գաւանձնատուր լինելու անմիտ առաջարկութիւնն էր։ Հայրս պատասխանեց նրանց մի թղթով, որ լուսամուտէն վար ձգեցինք մենք, և որով կը յայտնէր Ս. ազգային հետևեալը.—«Եթէ դու հաշիւ ունիս ինձ հետ, քարեհաճիր ուրիշ առիթ մարդու նման գալ և մաքրել, որով զուր տեղը անմեղ արիւն թափելու կարիք չի մնար։ Բայց եթէ դուք վճռել էք զէնքով գործ ունենալ, ես բոպէաշափ անգամ չեմ վարանի նոյն բառնով պատասխանել ձեզ»։

Ս. ազան թաղիքը կարգալէ յետոյ միայն մի հրէշային քրքիջ արձակեց և հրամայեց իւր մարդկանց կրակ տեղալ մեր գլխին։

Այնուհետև հայրս էլ կարգադրեց, որ զէնք կրելու բոլոր անընդունակներին փակենք վերևի յարկի մէջին օթեակներ։ Միայն զինուածները

Ա 13894

գիրքեր գրաւեցին լուսամուտների և պատշգամբների մօտ։ Այդ ամենը կատարուեց կայծակի արագութեամբ։

Ես երբէք չեմ կարող մոռանալ այն վերին աստիճանի սրտաշարժ տեսարանը, երբ, մեր քիրվանները Մուրիատ պէկի կարգադրութեամբ, գրկախառնեցինք մենք Հայ. ը և որդիք ու սուրբ համբոյրներ գրոշմելով միմեանց ճակատին՝ ուխտեցինք կռուել մինչև մեր վերջին շունչը և մինչև վերջին կաթիլ արիւնը ու մեռնել միմեանց համար... Նոյն բանը կը կատարէր և միւսների մէջ...

Այդ խակ բոպէներին քաղաքի մի քանի թաղերէն մեզ կը գիմէին պայմանական բառերով ու նշաններով հայ երիտասարդների խումբեր ու կառաջարկէին իրենց օգնութիւնը։ Բայց հայրս կտրուկ կերպով մերժեց նրանց, առարկելով թէ այդպիսով մասնաւոր ցոյցը կարող էր ընդհանուր բնաւորութիւն ստանալ և ջնջել ամբողջ քաղաքի Հայութեան։

Թ.

Մինչ այս մինչ այն, թշնամին՝ նկատելով իւր եռանդուն հրացանաձգութեան դէմ մեր պահպանած վիրաւորական լռութիւնը՝ որոշեց քարի, կացնի և այլ հարուածներով խորտակել մեր տան երկաթապատ դուռը և ներս խուժել։

Ահա այդ առեն միայն հայրս վեր առաւ այնպէս հրացանը։

— Տղերքճան, դարձաւ նա մեզ, — ամենքդ հետեւեցէք մեր քաջ քիրվա Մուրթատ պէկի հրահանգներին և լսեցէք նրան՝ ինչպէս ձեր զօրապետին։ Եւ թող չի տրտմին ձեր հոգիները, որ մեր հանդէսը Սև Հարսանիք դարձաւ. սա էլ մի տեսակ փառաւոր հանդէս է, որով պիտի ցոյց տանք մեր դրացիներին, որ գիտենք ասիայի ասուծուն պաշտել և միւս կողմից ցոյց տալ մարդկանց, որ դարաւոր սարկութիւնը դեռ անզօր է եղել խլելու մեր մէջէն ասպետական, ռազմիկ ոգին! Օ՞ն, ուրեմն, կրա՞կ . . .

Ու «կրա՞կ» բացականչութեան հետ առաջին անգամ որոտաց այնպուն. հօրս օրինակին հետեւեցին և Մուրթատ Պէկն ու բոլոր Մեացեալները՝ սարսափ տարածելով թշնամու վրայ։

Այնպուի առաջին իսկ կապարը ձիէն վար գլորել էր թշնամու առաջնորդին։ Այն Ս. աղան, որ ամբողջ գաւառի հայութեան գլխին գառել էր պատիժ—պատուհաս՝ «վրէ՞ժ» գոչելով կը փչէր հոգին։

Այդ բանի հետ քիչ չէր զայրացներ ամբոխին և՛ այն հերոսական դիմադրութիւնը, որ ցոյց կուտար մեր տանդուռը։ Սրտի զայրոյթէն կատաղել էր թշնամին, որ իւր աչագին ուժով չէր կարող ընկճել մի բուռն հայե-

բի. սակայն ո՞ւմ հոգն էր նրանց կատաղութիւնը։ Բանը նրանումն էր, որ մեր կողմէն բաց թողնուած մէն մի գնդակ կը գիմէր հաւատարմութեամբ և կը հասնէր իւր նպատակին։

Ժ.

Զարմանալի էր այդ անցքի ժամանակ Տաճիկ կառավարութեան բռնած դիրքը։ Մօտ 2 ժամուն խլացուցիչ հրացանաձգութիւնէն յետոյ միայն կիմանար զաւառապետի օգնականը՝ իւր քթի տակ կատարուող անցուդարձը։

Իսկ մինչ նրա իմանալը մեր տան դուռն արդէն խորտակել և մեր թշնամին ներս էր դրսէ տուել պապ զէնքերով, որովհետև տան մէջ, այդ սարսափելի իրարանցումի ժամանակ հրաշէնները չէին կարող գործ խաղալ . . .

— Դաշոյնները մերկացրէք, հայեր, կը գոչէր գիւղացին Մուրթատ Պէկը՝ թշնամու ներս խուժելը նկատելով, — դաշոյն չունեցողը թող մեր առնէ կացին, սակր, փեռատ... ինչ որ կը հանդիպի։ Եւ ինքը իւր կեռ սրովը կը հնձէր թշնամու գլխները . . .

Այնուհետև թէ ի՞նչ կատարեցաւ մեր տան ներքին յարկում, երբ սկսեց սուսերամերձ աշուելի կռիւը, — այդ կը թողնեմ ընթերցողի երևակայութեանը . . .

Իսկ վերևո՞ւմ, տան երկրորդ և երրորդ

յարկերու՞մ, ուր անզէն կանայք և երեխաներ էին մեծի մեծն վիրաւորողները. — այդտեղ կատարած քաջութիւնի անցքերը նկարագրել չէ կարող սրեէ մարդկային գրիչ... Հոգեհա՞ն, գժոխայի՞ն տեսարան...

Ա՜խ... Տէր Աստուա՜ծ... Ահա նորապսակ զոյգը շրջապատուած է մօտ 20 վայրենի քրդերէ, որոնք իրենց արնաքամախ սրերով բոպէ առ բոպէ կը սպառնան նրանց կեանքի գարնանը...

Խեղճո՜ւկ Պետրոս-եղբայր, գեռ ս. պսակի թագը գլխին, նաթաթը ճակին, ստիպուած է սրով պաշտպանել իւր նորահարսի գեռափթիթ կեանքը... Բայց ի՞նչ, թշնամու անզգամ աչքը՝ նախ Հարսին, ապա իրա — նորափեսայ եղբօր լեարդերը դուրս կը թափէր...

Իսկ մայրս, խե՜ղճ կին, մոլեգնութեամբ կը քաշէր եղբօրս ձեռքէն ինկած սուրը և իւր մայրական քաղցրով կ'ինչնէր նորապսակներին բաղանող քուրդ Խալոյի գլխին ու ինքն էլ կը փռուէր գետին խոցուած սրտով...

ԺԱ.

Փոխ-գաւառապետը շրջապատեց մեր տունը՝ մի տասնեակ ոստիկաններով ու մի յիսնեակ զինուորներով և հրամայեց զինադուլի փող հնչեցնել։ Բայց որովհետև մարդակերու-

թեան ամենատաք ժամանակն էր և իւրաքանչիւր կողմ կ՚ուզէր յաղթեցնել վրէժի անպուսապ ծարաւը, այդ պատճառով էլ թէ՛ արշաւողները և թէ մեր մարդիք չէին կամենայ վերջ տալ կռուին։

Գաւառապետ փաշան ա. դ. իրարանցումի միջոցին համարեա հրաշքով ազատուեց ամբոխի վրէժխնդրութիւնէն. նա հագաւ կանացի զգեստ, գիրկն առաւ մի երեխայ և կայծակի արագութեամբ ինկաւ յիսնապետի գիրկը . . .

Հերոսական ջանքեր գործ դնելէ և 4 զինուոր էլ զոհ տալէ յետոյ, վերջապէս, յաջողուեց կառավարութեանը՝ դատարկել մեր տունը արշաւողներէն, որոնց և իրաւունք տուեց ցրուելու իրենց տները։

Փոխ–գաւառապետի կազմած արձանագրութիւնէն երևաց, որ արշաւողներէն սպանուել էին 220 հոգի և վիրաւորուել մօտ 150։ Իսկ մեզմէն սպանուել էին 63 հոգի և վիրաւորուել մի քանիսը։ Մեր կողմէն ինկածների թւումն էին ՀԻՆԳ ԵՂԲԱՑՐՆԵՐՍ, որոնցմէն Պետրոսը իւր նորահարսին հետ։

Մայրս, Մուրթատ պէկը, վերջնիս կինը և պատկիչ քահանան սատակել էին մահացու վէրքէր, որոնցմէ և մեռան նոքա յաջորդ օրը։

Հաճոյ՞ատ Ձեր ուկսրներին, անմոռա՞ց Սիրելիներ . . . Դուք 67 փայլուն ատաղիկներ էիք Ն.ի Ղեկնակամարին վրայ, որ այսօր չիջանելով մմնեցուցիք իմ օրն ու արևը . . .

Չեմ մոռանալու այն քառասուն ը, որ Ձեր հոգիները կը շշնջան իմ ականջի ներքև։ Քանի գեռ աչքումս լոյս, կրծքումս շունչ, բազկումս արիւն և ոյժ կայ՝ պիտի գործեմ այդ ՔԱՌԱՏԱՌԻ ուղղութեամբ, մինչև որ այրուած, փոթթոթուած սիրտս դադարի բաբախելէ և գամ ու հանգչի՞մ Ձեր կողքին!

Վերջ

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

[504.]

A I / 13894